# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 23.05.2016 թվականի թիվ 16 և 17 որոշումները:
Առդիր 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2016 թվականի N 16

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը,

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում տոկոս մասնաբաժնով ( հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ դրամ անվանական արժեքով) համայնքային սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Առաջարկել Ջրաշեն համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունում համայնքի կողմից տնօրինվող բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ կնքելով բաժնետոմսերի նվիրատվության մասին պայմանագիր:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | [signature] | | |
| 2.Զավեն Տոնիկյան | [signature] | | |
| 3.Կարապետ Ուռուսյան | [signature] | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | [signature] | | |
| 5.Մարտին Դավթյան | [signature] | | |
| 6.Հայկ Խալաթյան | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2016 թվականի N 17

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.04.2016 թիվ 16 նիստի արձանագրային որոշումը, Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 89-րդ հոդվածներով.

Որոշում է.

1.Ջրաշեն համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարը անհատույց նվիրատվության կարգով տրամադրել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին:

2.Համայնքի ղեկավարին՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վերը նշված անշարժ գույքերի նվիրատվության պայմանագրեր:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Զավեն Տոնիկյան | | | |
| 3.Կարապետ Ոտուսյան | | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 5.Մարտին Դավքյան | | | |
| 6.Հայկ Խալաթյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ